

Սոյն Հոկտեմբեր ամսոյ մէջ Սարգիս Արքեպիսկոպոս՝ հետն առած վերն յիշուած Յովհ. Վ. Ազարեանը մեկնեցաւ ի Հռոմ, ուր հայ կաթողիկեայ ազգայինք եւ Հռոմայ Եկեղեցւոյն աստիճանաւորք շատ սիրով ընդունեցան զինք։ Այնտեղ 20 Նոյ. (ն. ր.) 1745 թուականով՝ Հաւատաքննութեան Ս. Ժողովոյն Գահերիցուն կողմանէ թուղթ մը արուեցաւ իրեն (Գիւան Լիվոնոյի հայ եկեղ.) որով կը ծանուցուի՝ թէ Սարգիս Արքեպիսկոպոս Հաւատաքննութեան Ս. Ժողովոյն առջեւ ծնրագրեալ՝ տուած է Արեւելեայց համար սահմանուած հաւատոյ դաւանութիւնը եւ արձակում առած, հետեւաբար կրնայ ֆահանայութեան եւ Արքեպիսկոպոսութեան ամէն իշխանութիւնները գործադրել։

Նոյեմբեր ամսոյ վերջերը՝ Հռոմ հասնելէն տասն օր ետքը, ներկայացաւ Բենեդիկտոս ԺԴ. Սրբազան ֆահանայապետին, եւ թարգմանի ձեռօք խօսելով՝ շատ սէր եւ պատիւ ընդունեցաւ։ Սարգիս անձամբ կը ստորագրէ այս ունկնդրութիւնը Նոյ. 27ին Հռոմէն առ Մխիթար Աբբայ գրած նամակին մէջ մեծ սքանչացմամբ։ Թառաջ կը բերեմ աս երրորդ նամակին (Գիւ. Մխիթ. Վենետ.) օրինակը։

*Տեսուն Տեսուն Միօթարայ գերախմբաւորաւորապետի եւ Արքանայր կոչեցելոյ Սրբազանի, իւրեղալ ի Տէր Յիսուս։*

Ընդունակ քոյին աղօթից նպաստութեամբն, զկնի տասանց աւուրց բարեբաստօրէն ժամանելոյն մեր ի մեծս Հռոմ, առ ի յանդիման լինել երեսաց շնորհալեաց ծայրագնոյ ֆահանայապետին, նաեւ